



Վիճակագրական ՄԱՏԻԿԱՆ ԵՂԲԱՐՅ — ԴԱՆՈՒԹ

## “ՓԻՒՆԻԿ, Ի ԾՐԱԳԻՐԸ

- Փիւնիկ տիտի հրատարակուի ամսն երկու անգամ, ամեն ամսոյ 1ին եւ 15ին:
- 1.—Տոհմային կեանքի հին ու նոր պատկերներ, կենսական հարցին վրայ լուրջ ուսում, նասիրութիւններ. Հայոց գաղթային հոսանքին վրայ շտեմական տեսչութիւններ, մասնաւորապէս Եգիպտոսի հին ու նոր գաղթականութեանց:
  - 2.—Արձակ եւ ոտանաւոր բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու բարգմանութիւն:
  - 3.—Իրական նորութիւններ, կես-ժամօք ժողովրդոց կեանքէն ու բարեքն մանրաւասնութիւններ, հոշակաւոր եկեղեցիներու երկերէն հաղուած:
  - 4.—Եգիպտական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, սեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեսութիւններ:
  - 5.—Կիսամսեայ ընդհ. հալախական կացութեան վրայ հոծ ու ամփոփ տեսչութիւններ:
  - 6.—Արտասահմանի եւ գաւառական բղբակցութիւններ:

### ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹԵԱՆ

Եգիպտոսի համար . . . . .	Տարեկան . . . . .	Փր. 10
»	»	» 6
Ալատտոսհանի համար . . . . .	Տարեկան . . . . .	» 13
»	»	» 7
Կովկասի համար . . . . .	Տարեկան . . . . .	լուր. 5

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<p>Կենսագրութիւն Մ. Մամուրեանի Քմաձին ուրուագծեր (Օրպէլ). — ԴԻՄԱԿ Սարեակները. — Ս. ԲԻԻՐԱՏ Լեւոնականի մը Յուշատետրը. — ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ Որբասիրաց Ընկերութիւնք ի Գահիրէ—ՎԱՀԷ</p>	<p>Պ. Մամուրեանի Յիւնաստեղծութիւնք Մահաւորութիւն. — Ս. Օ. Աղբային Քրոնիկ Լրագաղ Քաղաքական կրթամանակ</p>
---	---

Չեանդիրները եւ չեն դարձուիր: Ա՛լընդունուին ամեն տեսակ տղեր: Կամակ, յարուած եւ բաժանորդագին պէտք է զրկել առ Տիար Ս. ԲԻՒՐԱՏ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE **ՔԻՔՆԻՔ**  
INSTITUTION CENTRALE  
LE CAIRE



սիրան ու ոգին, և այն համոզմամբ թէ՛ հայ մանկան մի նախնական կրթութեան հիմն ազգային և տեղազիտական լինելու է, 1842ին յղեց զայնս ի Զմիւռնիա, Մեսրոպեան վարժարան:

Յայնժամ Մատթէոս՝ որ մայրենի լեզուն չափ կը խօսէր յունարէն և արաբերէնը, իւր Ղուկաս եղբոր հետ սկսաւ շարունակել դպրոց, ուր յունարէնի ուսումն արգիլուեցաւ իրեն, զի ըստ նոյն առեւնի Մեսրոպեան դպրոցի կրթական ծրագրին, ներելի չէր ուսանողի մը համար՝ չև ուսած հայերէնի քերականութեան համաձայնութիւնն, օտար լեզու ունիլ: Թէև Մատթէոս ի խոր խոցեցաւ այս դէպքէն այլ չվհատեցաւ, զի վնասիչ գիտցող տղայ չէր:

Երկրօտասանամեայ՝ խառնուեցաւ 6—7 ամենի տղոց հետ, և գրեթէ ութ ամիսներու մէջ Սաղմոս, Կաակարան, Նարեկ կարգաց լինցուց: Նոյն առեւնի մանկանց հասարակ ընթերցանութեան գրքերն առ հասարակ այսօրիկ էին, զորս չ'որոճացած ներելի չէր կարդալ ունիլ և քերականութիւն սկսիլ: Շահինեան վարժապետն օր մը զինքը յանիրաւի ձեծելուն համար, Մատթէոս ա'լ դըպրոց չը գնաց: Անիրաւութեան դէմ այս ըմբատ մանուկ՝ առանձնացաւ իւր տան մէջ, ինքնուրոյն շարունակել իր ուսումն, որ աւելի օգտակար եղաւ: Ազգականաց յորդորներէն ողորտելով Մատթէոս կրկին կը շարունակէ յաճախել Մեսրոպեան վարժարան, ուր առ ոտս Վանանդեցի Գրիգոր վարժապետին՝ տարի ու կէս ուսաւ ինչ որ վարժապետն աւանդեց իրեն: Հազիւ թէ սկսած էր քանի մ'ամսէ ի վեր ունիլ ֆրանսերէն Գրավի վարժապետէն, երբ 1845ին հրդէհն միխրոյ վրայ նստեցուց Մատթէոսի ընտանիքը՝ որ այն ինչ դարձած էր Աղեքսանդրիայէն: Նոյն ժամանակ փարիզու Մուրատեան վարժարանը բացուելու վրայ էր, Մատ-

թէոս ինքզինքն ևս անդ ընդունելի արձանագրել տուաւ, և քանի մ'ամիս յետոյ՝ երբ Հ. Ստեփան Վ. Եազըճեան՝ Պոլսէն աշակերտներ առած Զմիւռնիա կը հանդիպի, անոր փարիզ ուղևորելու համար, Մատթէոս կը փութայ անմիջապէս սոմնակ մ'առնուլ և ինքզինք նետել շոգենաւ, որ հազիւ մի քանի ժամ միայն պիտի սպասէր հոն, որով ժամանակ խոկ չունենար իւր ծնողաց մտք բարեաւ մ'ըսելու: Մամուրեան Յ տարի շարունակ փարիզի Մուրատեան վարժարանի մէջ կ'ուսնի, ընդօրինակելի ջանասիրութեամբ, ամբիժ վարուք, իւր ուսուցչաց և ընկերաց համահաւասար համակրելի և նշանակելի լինելով, որպէս կը վկայէ Հ. Գաբրիէլ Այվազովսքիի տուած վկայականը:

Դասատուք էին նշանաւոր գիտուններ և իրեն գասընկերքն էին Յովսէփ Խան Մելլուսեանց, Յովհաննէս Էֆէնտի Սաղըզլեան, Մարկոս Էֆէնտի Աղաբեկեանց և Յովսէփ Էֆէնտի Եսայեան: Զմիւռնիացի ուսանողն երբ 1851ին տուաւ ընթացաւարտի քրննութիւնն, գարուս և ամեն գարու նշանաւոր բանաստեղծն և իւր ժամանակի հռչակաւոր պետական մարզերէն մին, Լամարդին, ինքն իւր ձեռօք կը պսակէ դափնեայ պսակով զՄամուրեան՝ հիանալով Յոնիացի ծաղկահասակ և հանճարեղ Հայ երկրօտասարդին հոգեկան հատընտիր ճրից հետ՝ նաև նորա բնական վայելչագեղութեան վրայ, որոյ կապոյտ, կիտուածագեղ, վառվռուն աչերն, դեղձան գոռզ գանգուրներն, խարտեաշ, նրբադիժ, կայտառ դէմքն, սրբատաշ, լայն և բարձր ճակատն, ջղային—մաղձային փափուկ կազմը կը հայելայնէին նորա գեղեցիկ և թափանցիկ միտքը, խուզարկու ոգին, նկարէն երևակայութիւնը. փափուկ զգայնութիւնը, նուրբ ճաշակը, ինչպէս և իր անվեհեր կեցուածքն և անդեղի բացատրութիւնքն, իր անկախ նկարագիրն որ ցարգ կը տիրէ

իւր ոճոյն մէջ: Մամուրեան՝ իբր մրցանակ իւր իմացական յաղթանակին՝ պիտի մոռնէր կրինեօնի երկրագործական վարժարանն եթէ ընտանեկան ձախորդութեանց առթիւ չը ստիպուէր վերջապահաւ ի Զմիւռնիա, ուր իրեն յարմար ուրիշ գործ չ'գտնելով՝ կը սկսէր դասախօսութեամբ զբաղիլ: Իւր հայրենեաց մէջ Աղաբեկեան Սարգիս էֆէնտիին ձեռօք կը հիմնէ մի մասնաւոր վարժարան որ ապա կը կործանի հակառակորդաց շնորհիւ, և որ այսօր իւր տունն եղած է, կոկիկ և հմայուն ոճով մը շինուած: Նոյն ատենն է որ Մամուրեան կը թարգմանէ վալթերի քանի մը փոքրիկ գործերն: Բայց ընտանեաց ապրուստին հոգն իր վրայ ծանրանալով՝ կը ստիպուի Պոլիս երթալ, կեդրոնին մէջ իրեն յարմար ուրիշ պաշտօն մը գտնելու համար: 1852ին Խասագիւղի Ներսէսեան վարցարանի Տեսուչ կը կարգուի, գասեր ևս աւանդելով, ուր դասախօսութիւն կ'ընէր տիրացու Պօղոսը, — հոգեւոյս Ներսէս Պատրիարք վարժապետեան — որ մինչև իւր վերջին շունչն ամենայն անկեղծութեամբ, յարգանքօք և հաստատաձեռութեամբ պահեց առ իւր վաղեմի Տեսուչն Մամուրեան ունեցած իւր վաղեմի ջերմ համակրանքն, որոյ ազազոյցներն են իր այլ և այլ ինքնագիր թղթակցութիւններն զորս անձանձրոյթ կը գրէր միշտ Ներսէս Պատրիարքն՝ Արեւելեան Մամուրոյ խմբագրին, իւր և իւր պաշտօնավարութեան նկատմամբ ըրած կծու քնննադատութեանց և ուրիշ կարեօր խորհրդածութեանցն առթիւ. նամակներ՝ զոր կարգացողն զարմացմամբ կը համակուի թէ այն մեծն, անմահն և անմահան Ներսէս ինչ մեծ և սրբան բարձր նշանակութիւն կուտայ Արեւելեան Մամուրոյ խմբագրին, և այնքան մեծ հիացմամբ կը գնահատէ եղեր նորա մեծարժէք տաղանդն որ թէև ամեն հայու համար անժրխտելի է, այլ սակայն Ներսէս Պատ-

րիարքին սոյն անկեղծ, խոնարհական ու փաղաքշէլի գնահատութիւնքն՝ Մամուրեանի արժանեաց վրայ աւելի նուիրական վեհութեան մը դրոշմը կը յաւելուն:

Խասագիւղի Ներսէսեան վարժարանի տեսչութեան ատեն արեւելեան պատերազմը կը ծագի: Մամուրեան թարգմանի պաշտօն վարել կը հրաւիրուի անգլիական հրամանատարութեան ներքե գոնուող օսմանեան զօրագնդի մը մէջ, ի Պէօյի քաղաքէ: Բայց քիչ ատենէ վերջ՝ հնտախտ բռնուելով՝ կը փութայ դառնալ ի Խասագիւղ և տեղւոյն ազգային վարժարանաց մէջ քանի մ'ամիս վերըստին դասախօսութիւն ընելէ յետոյ՝ կը հրաւիրուի փիլիպինեան Նշան ամերայի տան իբրև ուսուցիչ:

1856ին Ճէզայիրլեան Մկրտիչ ամերայի քով 23 օտմ. ոսկի ամսաթոշակաւ իբրև բարտուղար կոչուելով, Մալթա կ'երթայ ուր կը զբանդէր Ճէզայիրլեան, որոյ հետ կ'երթայ ի Լոնտոն ուր գրեթէ երկու տարի կը մնայ, և Ամիրային գործոց պատճառաւ կ'տեսնուի Լորա Քլորքետընի և Լորա Բալմէրադընի հետ, անպա կ'անցնի ի Փարիզ ուր քանի մ'ամիս մնալէ յետոյ կ'ուղևորի ի Ս. Բէզրսպուրկ 1858ին ապրիլ ամսոյ մէջ՝ ցամաքի ճամբով: Հոն իւր գործերն աւարտելով կը վերադառնայ ամիրային հետ ի կ. Պոլիս, հանդիպելով ճանապարհայն Եւրոպայի չ'այցելած միւս կեդրոններն ևս կարճ ի կարճոյ:

Մամուրեանի Ճէզայիրլեան ամերայի հետ ըրած սոյն ուղևորութիւնն իշխանաշուք հանգամանք մ'ունեցած է՝ համաձայն նոյն ատենի մէջ Ճէզայիրլեան ամիրային ունեցած ամենակարող և ամենափարթաւ վիճակին: Մամուրեան կը յուտար իւր բազմազգի մի աշխատութեանց վարձատրութիւնը ընդունիլ, բայց Ճէզայիրլեանի գործերն՝ երկու տարի ևս երկարելով նիւթական անձկութեամբ պա-

չարեալ՝ կը ստիպուի ամեն տեսակ տառապանաց ենթարկուիլ: Քանի մը ամիս իւր հայրենիքն կը մեկնի, ապա կրկին վերագաւանալով Ճէզայիրլեանի մօտ՝ կը սկսի շարունակել իւր պաշտօն, պարապոյ ժամերուն մէջ Մամուրեան Ծիրիլինը և Լօֆի Դաւսիարակոսիւնը թարգմանեց, նաև գրեց Անգլիական Նաւակաւսին կամ Հայոյ մը ձակասագիրք, որ յետոյ հրատարակուեցաւ, մասամբ Կոտլնի մէջ, իսկ այժմ՝ ամբողջն՝ որ կը կազմէ գիրք մը, հրատարակուած է, ուր հեղինակին ընտիր ճաշակը, գեղեցիկ միտքը, վճիտ իմացականութիւնը, յղկուն ու ջղուտ ոճը, օգտաւէտ խորհրդածութիւնը, ազգային յանկուցիչ պատկերները լուսի նման կը փայլին:

1861ին Սարգիս Պատրիարքի կողմանէ կը հրաւիրուի նոյնպէս 20 ոսկի ամսաթոշակով՝ ի պաշտօն Դիւանապետութեան ազգային Պատրիարքարանի, և Ճէզայիրլեան յակամայս կը պարաւտորի թողուլ իւր միակ և վերջին մխիթարանք քարտուղարն՝ որ այդ պաշտօնն ստանձնէ: Ճէզայիրլեան ամիրան 62ին մեռնելով հետը կը տանի նաև Մամուրեանի յեանեալ ամսականներէն գոյացած մեծկակ գումար մը, որով կը ստիպուի իր 32 տարեկան հասակին մէջ բազմից այրենգիմն վերսկսիլ: Ըսինք թէ Մամուրեան վհատող չէր: Նա տղկուն և աննկուն արիութեամբ և յայնժամ նմանը չտեսնուած ախպար գործունէութեամբ ու յաջողութեամբ վարեց իւր պաշտօն՝ մինչև 63, երբ Մահմանադրական այլ և այլ շիթութեանց միջոցին, Մամուրեան ևս իւր ներքին համոզման հակառակ վարչութեան մ'առջև գտնուելով, կ'որոշէ հրաժարիլ և այս անգամ՝ ևս իւր անվճար թոշակներն մեծ դժուարութեամբ և ծանր վնասով հազիւ կարող կ'ըլլայ ստանալ:

Մատթէոս Մամուրեան իբրև Դիւանի պաշտօնեայ, իբրև կրթական

պաշտօնեայ, իբրև թարգմանիչ, իբրև խմբագիր, իբրև մասենագիր յոյժ գնահատելի և կարի արդիւնաւոր ծառայութիւններ մատուցած է ազգին: (Շարունակելի)

## ՔՄԱԾԻՆ ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

(ՕՔՊԵԼ)

Քանիմաց վարչագէտ, ներհուն երևագէտ, հոգեբան-իմաստասէր, վերլուծող ու խորաթափանց միտք, ահա՛ կեղակարծ տպաւորութիւնը զոր կը թողու Օրպէլ առաջին տեսութեան մէջ իր խօսակցին վրայ: Սակայն հարևանցի ուսումնասիրութեան մ'առջև պատրանքը շուտով կը փարատի, օճառի պղպղակներու պէս յօղս կը ցնդին այս խաբուսիկ շնորհարը և Օրպէլ կ'երևի իր իսկատիա երանգով՝ իբր սնամէջ, անգոյն, անսկզբունք ու խորամանկ միտք մը:

Թէև տարիներով եզիպտական ջերմիկ կլիմային տակ սնած, մեծցած, Օրպէլ ցուրտ ու վանող հով մ'ունի և զուրկ է այն տաք ու դիւրահաղորդ նկարագրէն որ պիտի կրնար համակրութիւններ ու գուրգուրանքներ ըստեղծել իր շուրջ և որ՝ միանալով իր ի բնէ ուշիմ և լուրջ խառնուածքին՝ պիտի սատարէր ընկերային աւելի բարձր մակարդակի մը հասնելու, մինչդեռ մաղձոտութեան մօտեցող իր անժպիտ ու տխրաբոյր գէմքը, որուն վրայ սակայն ի պահանջել հարկին գիտէ խնդամիտ ու փաղաքուշ վարագոյր մը քաշել իր շինովի քալուածքը, որուն մէջ ինքնիրեն կարևորութիւն տալու, մենք ազգայի հովեր առնելու միամիտ ճիգ մը կը մատնուի, վարանքի և կեզրոնախոյս զօրութեան պէս բան մը կ'ազգրեն իրեն մօտեցողին և մտածել կուտան վայրկեան մը թէ՛ զուարթ թէ՛ տխուր գէմքով,

մեծամիտ թէ ցածուն գիրքով հարկ է ներկայիլ իրեն, մտերմական թէ ոչ պաշտօնական ձև մը տալ խօսակցութեան զոր ունենալ կ'ուզուի իրեն հետ:

Ըստ երևոյթին՝ հայեցողական կեանքի մը սիրահար՝ Օրպէլ մեկուսի կ'անցընէ իր միօրինակ կենցաղը: Իր գրասենեկին ու իր սուրճի գաւաթին, երբեմն ալ բնութեցանութեան միջև ամփոփելով իր աշխատութեան ու հանգստեան ժամերը:

Օրպէլ իսկապէս ընկերային ո'չ մէկ չըջանակի կը պատկանի: Հայրույթի մէջ՝ ո'ւր միայն արժանի կը գտնէ ինքզինք յաճախելու, շատ պըզտիկ կ'երևի ու աննշան կը մնայ, իսկ ժողովրդական չըջանակներու մէջ մտնելու համար շատ բարձր կը զգայ իր արժանապատուութիւնը:

Անսկզբունք ու հակասական բնատրութեան տէր՝ Օրպէլ ստէպ կըռնակ կը գարձընէ ժողովուրդին՝ անոր շահերը կոխկռտելով և երբեմն պաշտած սկզբունքներուն գէ՛տ արայելով: Իսկ քիչ անգամ՝ ջերմ ժողովրդականի հովեր կ'առնէ և իբր անվեհեր տրիբուն ժողովրդական շահերուն՝ չ'վարանիր իր արհամարհանքի թուքը չպրտել ազնուականներու երեսին:

Ոչինչ այնքան սիրելի է Օրպէլի՝ որքան վեճարանիլ որևէ խնդրոյ մը վրայ չէ՛ թէ համոզելու կամ տարհամոզելու դիտումով, այլ պարզապէս վիճարանելու, ընդդիմախօսելու անզուսպ տենչով, և այս վիճասէր բնութիւնը կը մեկնուի այն եսամոլ ու ինքնահաւան ոգւով որ իր նկարագրին տիրող յատկանիշներէն մին է:

Սակայն անտողիտ է Օրպէլ իբր բարոյասէր ու պատուակիր անձ, անձնուէր՝ իր վարուց ու բարուց մէջ, զգուշաւոր ու պարկեշտ՝ իր խօսակցութեան մէջ, լուրջ և համեստ՝ իր յարաբերութեանց մէջ, յարգելի և ամբիժ անուն մը շահած է ընկերային և ընտանեկան ամփոփ չըջանակներու մէջ, թէև այս ամենը ար-

գեւք մը չեն որ Օրպէլ իր սիրտը տուած ըլլայ պաշտելի գեղուհոյ մը և ուխտած օր մը մեծ այրն արտասանելու նէրա հետ զուխ գլխի՝ Հիմէնեան ջահերու մաքրափայլ ցոլբերուն տակ:

ԴԻՄԱԿ

### ՍԱՐԵԱԿՆԵՐԸ

Ո՛վ սարեակներ սուռկ սիրուն,  
Ահա սկսաք երգել գարուն.  
Գըթացէ՛ք, լուռ կեցէք մի քիչ,  
Չը լըսեմ ձեր ծայմը մագիչ:

Դուք թթեմույս վըրայ թառեր՝  
Կը գեղգեղէք սիրոյ բառեր.  
Կ'աղաչեմ, մի՛ ալլես երգէք,  
Մի՛ խոց սրտիկը՝ կեղեքէք:

Քաղցր են, այո՛, ձեր ծայմ ու երգ,  
Լոկ սըտերու՝ որ չունիմ վերք.  
Իսկ ինձ համար ձեր մէն մի շեշտ՝  
Տէգ մ'է կողիս կը ցողի շեշտ:

Ա՛խ, չեմ ուզեր լըսել ըզձեզ,  
Ես, ձեր տեսքով կարօտակէդ.  
Ձի սև սուզը զիս կը պատէ,  
Սիրտս ալ յաւէտ յուսահատ է

Թողէ՛ք գալար իմ թըթեմին,  
Թողէ՛ք թեթև իր հովանին.  
Դա՛ ցըցուած է ծոցը բանտիս,  
Ուր կը հալի հէգ լեռնորդիս:

Ատոր անոյշ հովանեաց տակ  
Նստած՝ յուզեմ հին յիշատակ  
Իմ անձկալի հայրենիքին,  
Որուս գերին է իմ հոգին:

Մինչ կը սիրեմ ես լուռ մընալ,  
Երագներով լոկ շատամալ.  
Նայիլ ի վեր, սուզիլ, լողալ,  
Փղձկիլ, փրփրիլ, յորդիլ, մըխալ:

Դուք, թուրքակիցեր իմ թըխագեղ,  
Է՛ր չէք խղներ ձըգել գեղգեղ

Չըզել հրդէհ ծոցը սըրտիս,  
Գրգռել առկայծ բոցը տարփիս:

Գնացէ՛ք, գնացէ՛ք ազատ մարգեր.  
Սփռել ծիծաղ, տարփից երգեր.  
Ձովացընել սրտեր սիրող,  
Միրահարաց ըլլալ զովող:

Իսկ ես հեռի բընավայրէս,  
Բանտապանի խոժոռ երես  
Կը տեսնեմ ու շղթաներում  
Շռինդը բանի խորն իմ հոգում:

Ցերեկն ակամջըս կ'ընեն խոց,  
Ժըխորները բանտարկելոց.  
Գիշերն ալ քունը չ'այցելեր,  
Բաց աչքերուս մահահրաւէր:

Ա՛յս է վիճակս, ո՛վ սարեակներ,  
Չը մեղանաք իմ հոգեակներ,  
Վախճան դըրէ՛ք ձեր երգելում,  
Երգերն աղիքըս կը գելում:  
29/5/93 Մ. ԲԻԻՐԱՏ

### ԼԵՌՆԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

#### ՀԱՐՍՆԻՔ ՄԸ ՄԵՐ ՏԱՆ ՄԷՁ

Դրացի մ'անէինք, մայրս յաճախ կը  
տանէր զիս անոր տունը, որ մեր փո-  
ղոյին մէջ էր. Լուկեկոց Պիւղիւս էր  
տանտիրոջ անունը, Թուրվալիս անուն  
կին մ'տնէր, որ ամեն անգամ ինձ  
հանգիպելուն՝ դպրոցը կամ եկեղե-  
ցին՝ ծոյս կը լեցնէր նուէրներով,  
— խնձոր, չախտակ, ընկոյզ ևն. — ես  
չատ կ'ախորժէի այդ տնէն: Օր մը  
մօրս հարցուցի թէ՛ ինչո՞ւ այդ կինն  
այդքան կը սիրէր զիս. «Մեր խնամին  
է, աղս'ս» ըսաւ:

Տեառնընդառաջի տօնէն վերջ՝ տը-  
ղայոց յատակ տաղտուկ մը կը զգայի,  
ա՛լ չէի կրնար տան մէջ փակուած  
մնալ ես, որ ամեն օր նոր նոր առիթ-  
ներ կ'սրտնէի զւարճաթեան: Արդէն  
քանի մ'օր առաջ բոլոր ազգական-  
ներս, հօրքոյր, մօրքոյր, քեռկին, ևն,

պէսպէս ընծաներով մեզի հետ գա-  
ցած էին մեր դրացի խնամիին տունը.  
Կը յիշեմ, շատ մը բաժակներ պար-  
պրած էին, կենդանոթեանդ, Ողջու-  
կոթեանդ և ուրիշ բարեմաղթու-  
թեանց հեղեղներով. ըսի՞ թէ ես  
հօրս քով, քույրն մօտ նստած էի.  
Ընդհակառակ բարձր քրքիշներ կ'արձա-  
կէին. գինին ջրի պէս կը գործածէին.  
Թակոյկները մէկ ժամն անգամ մը  
կը պարպուէին ու կը լեցուէին նորէն.  
Չուզելով թողնէք անոնց տունը, կէս  
գիշերին մեր տունը վերադարձանք:  
Դիտած էի որ երէց եղբայրս՝ Գէորգ՝  
ամօթ մը կը զգար, կը շառագունէր  
ամեն անգամ որ այն տանը խօսքը  
դառնար: Քանի մ'օրէն մեր տան  
մէջ անսովոր շարժում մը սկսաւ, հարա-  
նիքի պատրաստութիւն կը տեսնուէր  
հ.ն, ինչպէս որ կը կրկնէր մայրս,  
ինչ ումերես: Բեհեղներ, մեծաքսիզէն  
հագուտներ կարուած էին արդէն.  
Եղբայրս կը հագուէր, կը հանուէր. ես  
բան մ'չէի հասկնար. զոչս թափուած  
ընծաներուն հետ էի:

Վերջապէս հասաւ օրը, հարսնիքի  
օրը:

Ա. ետին եղբայրս՝ պնակ մ'աջիւր  
տարաւ եկեղեցին, ես բերաւ. «Օրհ-  
նեցին» ըսաւ: Մանկամարդ հարսներ,  
ազգական ու դրացի, մեր տունը խըւ-  
նած էին. խոշոր կ'ընքերու մէջ սկսան  
չափուել ախիւրը. երկաթի բոլորակ  
տախտակը դրին քույր եռոտանիին  
վրայ, փայտերը տակէն ձխտառն  
բայեր արձակել սկսան, մինչդեռ իրա-  
բու դէմ անցած, չորս հարսներ, չորսն  
ալ քաջաբազուկ, չորս տախտակներու  
վրայ շօթիկ կը բանային. միւս կողմէն  
պառաւուկ մը, կրակին գէմ նստած,  
կը դարձնէր հայն երկաթի տախ-  
տակին վրայ, կեփէր ու քովը կը կու-  
տէր: Այս արարողութիւնը տեւեց մին-  
չեւ առաւօտ, հայ բացօղներն ու ե-  
փօղները փոփ խակի քանալով ու ար-  
թըննալով:

Ձէյթունի մէկ հնաւանդ սովորոյ-  
թիւն հետեւելով՝ շատ մը շարեպաններ

եկան մեզ առաջադրու, հարսնիքի արտատար ծախքերուն մասնակցած լըլըլու համար, փոյս պիտի բերէին անտառէն: Իխմացք տեսայ բոժոժուսոր շարիներուն ընթացքը, քանի մը ժամէն փրագարձան, մեր տխուր մինչև առիգները լեցուցին փոյսի խոշոր կոճղերով:

Գարձեալ դրին եռասուններուն վրայ հսկայ կաթսաներ, մարս խօտելու ատեն չունէր. Գէորգ եղբայրս ալ լանցապարտի մը պէս կը պարտէր տանը մէջ:

Շատ բաներ եզան ուշագրաւ, շահագրգիռ աշարքալովիւններ անգի ունեցան, բայց պիտի փորձեմ հակիրճ մը պատմել միայն ինչ որ յիշողութեանս մէջ անեզձ մնացած է:

Անձրևոտ օր մ'էր. սրեարն ու կանոնին կը խոնէին մեր տան բակն ու փողոցը. քահանայ, դպիր, երգեցիկ մանուկներ միաձայն կը մըմնէին. շարական մը կը ծամձըմէին: Իսկոյն, տեսիլ նորանշան, խեղճ Գէորգ եղբայրս մերկացուցին, բակդրան առջև գրուած մեծանիստ կոճրի մը մէջ մրտաւ, վերէն տեղաւարտի անձրևը կ'իջէր, մինչդեռ կանրին քով ահակի կաթսայի մը շուրը կ'եռար: Երէցիկին մը — ինչ որ կը մատնէր իր ճերմակ կապէ վզնոցը — պարտակատարի խորին դիտակցութեամբ գինուած խորխուսալով կը լուսնար թագաւորը, սղորմելի՛ արարած, որ կը գողգողար տարափին տակ ու կը լկուէր, թէև երբեմն ալ եռացեալ ջրի տարափ մը կը տեղար գլխուն, որ այն պահուն ալեզարդի մը գլխիը պիտի կարծուէր, սծասի փրփուրներուն մէջ: Մոճղաները ձեծեցին, «Այսօր անձաւ» երգեցին, մինչև որ լուացումը վերջացաւ: «Կարգը Թագւոր եղբօրն է», ձայն մը զարկաւ ականջիս, անմի՛ապէս մերկացուցին զիս ալ, բռնեցին նետեցին նոյն կոնրին մէջ. լալով սղբալով, կամայակամայ կրեցի լրգանքի շարշարանքը որ սակայն, անհրաժեշտ էր, առան

պոյ հարսնիքը չեղեալ պիտի նկատուէր: Ո՛վ մտքի մըլորովիւն հին ու մուշած գլխներու: Տանջանքն անցուցի. Գէորգ եղբայրս, որ «Թագւոր»ն էր, այլակերպ եղաւ, սեփուկ էրարկու մ'անցուցին կոնակը մինչև կրունկը. զլուրը դրին պարտապանաց գաղտոգ մը — բամբակով լեցուն, չերա չերա կտաններէ կարուած գգակ մը, սրուն իրական ձևը կ'ուզե՛ս ունենալ, աչքիդ առջև բե՛ր օդապարհի մը մանրանկարը:

Ասով չէր վերջանար: Ս. Աստուածածնի մկնտատանին դանձաւնէն դուրս բերուած թուր մը, սեցած փոյսէ պատեհի մը մէջ, Թագաւորին ձախ ձեռքը սուին, աջովը կը բռնէր կարմիր խնձոր մը, մետաքոնէ թաշկինակի մը մէջ: Ես հաղած էի աչքիս կապոյ մը, կարմիր վառ գոյներով, մետաքսադորձ շապիկ մը. եայլն:

Այնուհետև ամբողջ վեր ելաւ մեր տունը. ամբողջ մը կանանց, մանաւանդ շաղակրատ պառաւանց, որոյ համար այսպիսի առիթներն անկրնչելի դանձեր են: Տեսնել պէտք էր խորշմերես ու առամնազուրկ շատուկներուն անվերջ հոտանքը խոտակցութեան, որուն նիւթերը քաղուած էին սովորաբար ամեն մէկուն հարսնիքի շքեղ ու անըման հանգէսներէն: Մին կը պարծենար թէ ինք թագին մէկ հատիկ շնաշխարհիկ օրիորդն էր, որ յարուցած էր պաշտօններու և նախանձոտներու երամ' մը և թէ իր հոգեւորս մայրը՝ զինք ի վերջոյ կարգած էր թագին ամենակտրիճ մէկ ըմբիշին հետ, որ — գարձեալ սառաւին պատմածն է — քանի՛ քանի՛ անգամներ վերքեր առած է կոխներու մէջ, ուրկէ յայլմական վերագարձած է: Ուրիշ մը կը պատմէր աւելի հիասքանչ հանդէս մը դարձեալ իր հարսնիքին օրը կատարուած:

Մեր տունը նեղ, չպիտի կրնար պայունակել ամբոխն այլեւաներուն որ ցկ'ածէին տակաւ: Ուստի, հօրեղբօրս

տունը, որ մեր տան կից էր, պարպեցին, այցելու կանանց համար. փոխադրութեան միջոցին պառաւներէն մին կը շարունակէր մէկ կողմէն սկըսած պատմութիւնն ու միւս կողմէն իր ընթացքը: Յարգի գորգերով ծածկուած էր տան յատակը, որ հողածեփ էր. լոյսերը վառեցին, երկու կողմն ալ վառարաններն սկսան ճորճատել: Գինին ու օլին կը հօտէին. մարդիկ, ծեր ու երիտասարդ, զարոյճէի տեսած ուրիշ ատեն, ամենքն ալ ուրախ զուարթ, կատակներ կ'ուղղէին իրարու. իսկ զիս, Թագուոր-եղբայր, գրկէ գրկի կը նետէին: Քահանայք սր 6—7 էին թուով, բարձրադիր փռոցներու վրայ ծալապատիկ կը տաքնային կրակին մօտիկ, անոնց քովերը նստած էին թային տապանին, տրիպուրեան մետաքսէ փաթկոցներով, կապոյտ թիկնոյներով, կարմիր գզակով, սատափի կամ սաթի համրիչներով. ծխափողը կը մխար, նարկիլէները կը գոռոռային: Այսքան կատակաբան բաղմութեան մը մէջ, երեսը կախ, անկուն մը կ'ծկտած խեղճուկ յանցաւոր մը, կարմիր խնձորը քթին, լուռ ու մուռ կը տանջուէր. եղբայրս էր անի, որ կ'ամուսնանար և որուն դիտան չորքը կը դառնային ա'յլքան խաղերն ու հանդէսները:

Դառնանք հիմայ բաղմականաց բանակուիներուն. նախ պարզ կատակ մը, սրախօսութիւն մը, քիչ քիչ գլուխները կը տաքնան, քամահրելու կը սկսին զիրար. մին կը սնդէ որ հալաւակորդը կախաղանի արժանի է, և գործադրութիւնը կը պահանջէ, բաղմականաց ի պատիւ հաւ մը մորթել տարու խոտուումով. հակառակորդը՝ միւսին կախախը կը պահանջէ, խոտացուած հաւին տեղ ուլ մը առաջարկելով. ուր կ'ըլլայ այժ, այժը՝ մարի, մաքին՝ կով. կովն ալ եզ վերջապէս ընկրկողին վիճակը շատ արդահատելի կը դառնայ, մինչև որ այժ մը կը բերեն կը պառկեցնեն, ա.իւնը կը վազցնեն, կը քերթեն,

կաթման կը դնեն, կամ շամփուրներու վրայ կը շարեն. զինն պակիլ չըլլար. տունը բոլոր՝ բաղմականաց քմաքին տրամադրութեան տակ է: Մինչդեռ այս գործողութիւնը կը կատարուի ամբօխին մէջ, յանկարծ մութին մէջէն դարս զը նետուի խեղկատակ մը, երեսներն ալիւր քսած, յոնքերը կարմիր երկած, այլանպակ հազուսաներով, կը սկսի խաղալ ու պարել: Հանդէսը կ'ոգևորուի, ռազմաշունչ բնագոյր կ'արթննայ լեռնականաց, և ահա՛, սեւալուխ մը, սև ու խոփու գէմքով, տան երէցը, կ'ազգարուէ որ մեկներու ժամն եկած է:

Դուրը պայթումներն իրարու յաջորդեցին, նշանը սրուեցաւ, հարիւրաւոր հրացաններ մէկ անգամով պարպուեցան, և թնդացուցին շրջակայ լեռները:

(Շարունակելի) ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ

ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
Ի ԳՈՂԵՐԷ

Վասպուրականցի ազգայիններէն անմիջապէս վերջ, Արաբկիրցիներն եղան որ զգացին որբասիրաց ընկերութիւններ կազմակերպելու անհրաժեշտ պէտքը, ու սկսան քանի մը ձեռներէց երիտասարդներու ջանքերով ընկերներ հաւաքել, ժողով գումարել, դիւան կազմել և գործի սկսիլ: Խորհեցան անոնք թէ՛ ուրիշ ճամբայ չկար մեր որբերը օտարին ճիրաններէն ազատելու, բայց միայն տահմային անձնութեան թիւն:

Ալ չպիտի լսուին հետեւեալ կծու նախատալից խօսքերը. «Տե՛ս, տե՛ս սա Արաբկիրցիները, իրենք հոս հանգիստ նստած՝ կ'ուտեն, կը խմեն, դրամ կը զիզեն, և կը թողուն որ իրենց որբերը Ռօտոսթօյիները խնամեն...»:

Այո՛, զգացին մեր Վասպուրականցի ու Արաբկիրցի ազգայինները թէ՛

ամեն ժամանակէ աւելի հիմա պէտք է պաշտպան հանդիսանալ մեր անտերունչ որբերուն. հասկցան Եւրոպայի շահադիտումները մարդասիրութեան պատրուակին տակ, և վճռեցին իրենք իրենց ձեռքը խնամել, դատարարակէլ իրենց որբերը:

Բայց պէտք չէ մոռնալ մեր ազնիւ ազգայինները թէ՛ հիմնարկութեան մը, հաստատութեան մը փառքը գոռում գոչումով սկզբնաւորութեան մէջ չ'կայանար, այլ ապագայ յարատեւութեան մէջ: Եւ որովհետեւ Արաբկիրցի ազգայինները համեմատաբար պատկառելի մեծամասնութիւն մը կը կազմեն հոս, իրենց թըւով, զիւրով դրամով, պէտք է աշխատին ուրեմն կանգուն պահել նորահաստ սո Որբասիրաց ընկերութիւնը չ'խնայելով ամէն ինչ, թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս, այն նկատումով թէ՛ իր որբերն այսօր անժառանգեալ, կը կարօտին աւելի խնամաց ու զթառ ձեռքերու:

Բնական է թէ՛ այս պահանջը միմիայն Արաբկիրցիներուն կա՛մ վասպուրականցիներուն վրայ չ'ծանրանար, այլ ամեն անոնց որ Հայ կոչուին, անուն մը որ արդէն ասացին պատասխանատուութիւն կը գնէ իրենց վրայ, հանդէպ հայ որբերուն ու սովեալներուն:

Ուրախութեամբ կը լսենք թէ վասպուրականցաց «Որբասիրաց Ընկերութեան» անդամներուն թիւը արդէն հասած է 105ի: Անշուշտ ենք որ Արաբկիրցիք ալ պիտի շուտով բազմապատ կեն իրենց ընկերութեան անդամներուն թիւը, որուն անդամացելու համար չեն պահանջուիր բէք մեծամեծ գոհուցումներ: Վ. Ա. Հէ

**Պ. ՄԱՍՈՒՐԵԱՆԻ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ**

Հաճութեամբ կը հրատարակենք հեռեւեալ յայտարարութիւնը որ ազգային բազմահմուտ գրագէտ Մաա-

թէոս Մամուրեանի գրական գործունէութեան Յիմնամեակը տօնելու առթիւ իզմիր կազմուած Յանձնաժողովի կողմէ զրկուած է ամեն հայաշատ ու զարգացած կեդրոն, իբր հրաւեր բազմաթիւ բարեկամաց ու համակրողաց, մասնակցելու ազգովին ու հանդիսաւոր փառաւորման ծերունաշարք և պատկառելի Յօբելիտարին բազմարդին կենաց ու գործունէութեան:

Մաաթէոս Մամուրեան մին է այն հոյակապ գէփերէն՝ զորս զարեր հազիւ կը ծնին և որք իրենց հանճարի գրոշմը կուտան զարուն ուր ազրեցան, փառքն ու պարծանքը կը կազմեն հասարակութեան՝ որու կը պատկանին, բարոյական վերածնող կը հանդիսանան սերունդին ու զաստիարակութեան զոհած են իրենց կ'անձն մաքող և ա՛որ ուսհահարդի եղած՝ լուսոյ և յառաջդիմութեան շաւղին մէջ:

Մամուրեանի գրական և կրթական գործունէութիւնը կրնանք խտացնել հետեւեալ ամփոփ ստղերուն մէջ.

Տասնեկիններորդ զարու հայ-աշխարհիկ լեզուի բարեկարգիչներէն և գրականութիւնը զարգացնողներէ մին, ասա՛մ Գրագէտը. ազգային կենսական շահերուն և Եկեղեցւոյ իրաւանց քաջարի ախոյեան, ասա՛ Հրապարակագիրը. առո՛ղ և անկեղծ կրթութեամբ մատաղ սերնդին միւսքն ու սիրտը աշնուացնող և անոր ներշնչող ցեղին ու հայրենիքին սէրը, ասա՛ Գաստիարակը: Գրագէտին, Հրապարակաչին և Գաստիարակին ուղեցոյց եղած են աւգարութիւն և ճշմարտութիւն, իսկ նշանաբան՝ ազգային գերագոյն շահերու պաշտպանութիւն:

Մամուրեանի բազմաթիւ երկերէն կը յիշենք միայն հեռեւեալները.

Վերթիւի թարգմանութեամբ, որուն յաւաքաբանը ներկուռ իմաստասիրութեան գոհար մըն է, Մամուրեան սիրոյ սրբութիւնը տարփողեց հայ Երիտասարդութեան.

Հայրու մը ճակատագրով, ուր հասարակական ի յայտ կուգան բանաստեղծի, պատմագէտի և իմաստասէրի բազմազգիմի կարողութիւններ և որ իր գրաւոր երկասիրութեանց գլուխ-գործոցը կրնայ նկատուիլ, ցունց տուալ թմրած ընդարմացած սրտերու և բարւոյն ու գեղեցկին ճաշակը սըրբազործեց .

Սեւ Լեւիկն մարդը, բոցաշունչ և հայրենաշունչ տողերով ցեղային ու հայրենի զգացումները հրդեհեց և երիտասարդութիւնը ոսկեզօծեց :

Հանրային օգոյսի տեսակէտով ա՛յսքան բազմաբեղուն կեանք մը և ա՛յսքան արդիւնաշատ գործունէութիւն մը կ'արժէ՝ որ գնահատուին ազգովին արտայայտուած երախտագիտութեամբ և բազմավաստակ կեանքի վերջալոյսի մօտեցող Յորելեանը պսակուի փառաց զովնիններով : Գովելի է որ իզմիրցիք նախաձեռնարկ եղած են իրենց մեծանուն հայրենակցին Յորելեանը կատարելու և այս կերպով առիթ տուած մօտաւոր և հեռաւոր բազմաթիւ համակրողներուն՝ արտայայտելու իրենց հիացման ու մեծարանաց հաւատարմքը :

Քաջայոյս ենք որ Գահիրէի Հայ հասարակութիւնն ևս, մանաւանդ այն պատ. անձինք որ Հայ գրականութեան Մեծ վարպետին հայրենակից և աշակերտ ըլլալու պատիւն ունին, պիտի փութան արժանավայել կերպով փառաւորելու անոր Յորելեանը և վճարել իրենց երախտագիտութեան հարկն առ Մեծ Մշակն ազգային կրթութեան և գրականութեան :

Տոհմային գրականութեան և դաստիարակութեան բազմամեայ մշակն՝ Պ. Մատթէոս Մամուրեան, իր տկարութեան առթիւ և բժշկաց խորհրդով՝ պարտաւորուած է թողուլ իր սիրած աշխատութիւններն և հանգստութեան մէջ անցնել իր բազմաբեղուն կենաց ծերութեան օրերն :

Պ. Մամուրեանի կեանքն բեղմնաւոր է ամէն տեսակէտով, թէ՛ գրական ասպարիզին

մէջ և թէ՛ դաստիարակութեան : Սակայն այդ կեանքի ուսումնասիրութիւնն չէ՛, որ պիտի ներկայացնենք մե՛նք այժմ, այլ՝ գործունէութեան արդեանց մի համառօտագիծ պատկերն՝ 1850 թուականէն սկսեալ :

Պ. Մամուրեան Տեսուչ կարգուած է Կ. Պոլսոյ Խասգիւղի Ներսիսեան վարժարանին . Հինգաբիւր եղած է Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի զեւանական կարգադրութեան, որոյ հասուցած պաշտօնեաներէն է այօսը՝ նշանաւոր զիւանադպիր Բարթոյ Էֆ. Թեղեան :

Պ. Մամուրեան նախկին «Մաղիկ» թերթի խմբագրութեան մասնաճեղովնէ զատ՝ յիշմիր և ի Կ. Պոլիս, այսօր շուրջ 30 տարի է, որ կը հրատարակէ «Արև. Մամուլն» :

Պ. Մամուրեանի գրական երկասիրութիւններն բազմաթիւ են՝ վիպական, նամակագրական, թարգմանական, թատերական, մանկավարժական, պատմական, իմաստասիրական և այլն :

Պ. Մամուրեան Խասգիւղի վարժարանի Տեսուչութենէն զատ՝ 1867 թուականէն ի վեր անընդհատ դաստիարակութեան պաշտօն վարած է ի Զմիւղին, Մեսրոպեան և Հոփսիմեան վարժարանաց մէջ, որպէս Տեսուչ և Ուսուցիչ գիտութեանց և լեզուաց :

Այս արդի նշաւտ Մշակն այսօր գործէ կը քաշուի բժշկաց խորհրդով . բայց իր գրական երկերն սիրողներու և իր բազմաթիւ աշակերտներու սրտերն չեն քաշուիր իրմէն : Նոքա միշտ իրեն հետ են՝ մտքով, սրտով և հոգեով, զի քաջ զիտեն թէ՛ ո՛չ միայն բանիւ, այլ՝ գրչով պաշտպանած է Հայոց եկեղեցական իրաւունքներն . պաշտպանած է կրթութեան և կրթարանաց կարեւորութիւնն . պաշտպանած է ժողովրդի բարոյական գոյնութեան օգուտներն . Միով բանիւ պաշտպանած է ամեն բան, ինչ որ բարի է, օգտակար և ճշմարիտ, և այս պաշտպանութեան համար կրած է շատ չոհոյութիւններ, որ ամեն ճշմարտասէրներու թէ՛ բաժինն է և թէ՛ մխիթարութիւնը :

Արդ՝ մի այսպիսի բրտնաթոր և բազմաբեղուն Մշակի գրական և դաստիարակական Յորելեանն տօնելու համար՝ կը յայտարարուի թէ՛ իր գրագիտական հանճարն գնահատողներու և երախտագէտ աշակերտներու վաղուց տածած փափագանաց համաձայն՝ յատուկ

մանախումբ կազմուած է վիճակիս Առաջնորդ  
Տ. Մելքիսեդեկ Սրբազան Հօր նախագահութեան տակ:

Մասնա հոգովայ անդամք են՝

- Տ. Յովհաննես Գհնյ. Մինասեան
- Տ. Յարութիւն » Եղիվսրգեան
- Ստեբան Սպարթալի
- Գ. Յ Բարազեան
- Յակօբ Վեմեան
- Խոսրով Եիրեմ
- Յակօբ Տեր Գառարեան
- Աւետիս Տիվրիկեան

Յորեղանի հանդէսը պիտի կատարուի  
յառաջիկայ Հոկտեմբեր 17/29 կիրակի օր:  
Դրամական և այլ նուէրներ, հեռագիրներ,  
ուղերձներ և ամեն տեսակ թղթակցութիւնք,  
որք պիտի արձանագրուին և ապա մասնաւոր  
Տեղեկագրով հրատարակուին, կ'ուղղուին Ս.  
Նախագահին հետեւեալ հասցէով

Տ. Մելքիսեդեկ Ս. Արքեպիսկոպոս. Մու-  
րաւսեանց Իզմիր

*Monseigneur*

*Melchiselec Mouradianz*

SMYRNE

Իզմիր, 1 Յուլիս 1899

## ՄԱՀՏԻՈՒԹԻՒՆ

ՍԼԱԹԻՆ ՓԱՇԱ

Ռիւսօլֆ Սլաթին փաշա, Ե. Յ.  
քնիկ Աւատրիտցի է: Իր անունը ծայ-  
րէ ի ծայր ճանչցուած ու հռչակուած  
է Սուտանի մէջ, ու ամեն տեղ, պաշ-  
տօնական թէ անպաշտօն շրջաններու  
մէջ, ինչպէս նաև կառավարութեան  
բարեկամ Սուտանցի ցեղերէն, վայել-  
լած է այն նախանձելի համակրանքն  
ու սքանչացումը՝ որուն իսկուպէս  
արժանի է:

1875ին Սլաթին փաշա, այն ատեն  
զեռ երիտասարդ, իր երկրի բանա-  
կին մէջ հարիւրապետի աստիճան ու-  
նէր և Պօսնիական սահմանազրուիքը  
կը զսնուէր՝ երբ կօրսօն փաշայի

մի հրաւերին վրայ, եգիպտական  
կառավարութեան մէջ պաշտօն ստան-  
ձնեց: 1874ին արգէն անգամը իբր  
զրօսաշրջիկ այցելած էր Նուպիոյ լեռ-  
ները, իր ճամբորդութիւնը վերջա-  
ցնելով Քօրտօֆան ու վերագարձած  
էր իր բնագաւառը՝ ծնողացը ստի-  
պողական թախանձանքին վրայ:  
1879ին, Սուտանի հարաւակողմի նա-  
հանգներուն վրայ ելմտական տեսուչ  
կարգուեցաւ: Իր պաշտօնը խղճի  
մտօք կատարել ուղեց և իր պաշտօ-  
նական տեղեկագրութեանց մէջ՝ բը-  
նաւ չ'վարանեցաւ մատնանիչ ընել  
այն ամեն զեղծումները որ կը կա-  
տարուէին նոյն իսկ կառավարական  
պաշտօնեաներու կողմէ, և որոնք վերջ  
ի վերջոյ կորստեան պիտի առաջ-  
նորդէին լայնատարած երկիր մը, որուն  
համար անհատնու՛մ ոսկի ծախսուած  
էր մեծն Մուհամմէտ Ալի փաշայի  
օրով: Բայց, զգալով որ ինք այդ  
ամեն խորապէս արմատացած կեղ-  
տոտութիւնները մաքրել տալու չափ  
քաջասրտութիւն չունէր՝ հրաժարե-  
ցաւ այդ պաշտօնէն:

Ապա Սուլթան Հարուն ապտամ-  
բի մը դէմ կռուելու ելաւ ու յաղ-  
թեց: Քիչ վերջ Տարֆուրի ընդհանուր  
կառավարիչ անուանեցաւ և իր բա-  
նակատեղին ըրաւ Տարա, Տարֆուրի  
մայրաքաղաքը: Երիտասարդ էր դեռ  
գեղեցկագէժ և կարիճ, իր ասպարէ-  
զին մէջ փայլելու տենչացող. ու իր  
երիտասարդական աւիւնին մէջ՝ չար-  
չարանք և խոչընդոտ նշանակութիւն  
չունէին իրեն քով. կ'ուղէր միայն  
իր զօրքերուն աչքին երևնալ, ցոյց  
տալով անոնց թէ՛ զիրենք կառավար-  
ելու մարդն է ինք: Ամեն բանէ ա-  
ւելի, իր բանակի կարգապահութեան  
հետամուտ՝ շատ խիստ էր իր հրա-  
մաններուն մէջ, ինչ որ հաճելի չ'ե-  
րեցաւ այն կարգ մը թուրք և Արաբ  
զօրակաւներուն, որոնք կէս սանձար-  
ձակ՝ բնաւ վարժուած չէին այդքան  
խստութեան: Խստապահանջ և կեն-  
ցաղագէտ ըլլալ՝ զօրապետի մը ամե-

նատարրական պարտքն է: Սլաթին փաշա, առաջնոյն աւելի հակամէտ էր և մասամբ մը իրաւունք ունէր: Որչափ սակաւաթիւ ըլլալու էին այն զօրապետները որ կը կատարէին իրենց պարտքը այնպէս ինչպէս որ պէտք էր. իսկ մնացեալը, վաւաչոտ և անպարտաճանաչ արարածներ, բնաւ հոգը չունէին իրենց հրամայեալներու կարգ ու կանոնին, զօրապետական բարձր պաշտօնէն աւելի նախընտրելով գձուձ հարկարանութիւնը, անտարակոյս նուաստացուցիչ՝ ամեն մասամբ: Պահականոցի մէջ փոխանակ իրենց գործերով զբաղելու, աներ կը շինէին, պարտէզներ կը պատրաստէին, իրենց անձնական պէտքերուն ծառայեցնելով նոյնպէս իրենց սեփական զօրքերը: Սլաթին այս ամենը արդիւնէլ տուաւ, բայց ա՛լ ազէկ աչքով չէր նայուեր: Միմա և խավտպիր արաբներու հետ ունեցած ընդհարումներէն զատ՝ Սլաթին փաշա ատենէ ի վեր անընդհատ կուուելու վրայ էր Մատիպոս անուանեալ մարզակերպի մը դէմ, որ լոկ ընչաքաղցութենէ մղուած՝ աննըշան խնդրոյ մը համար գժտուած էր կառավարութեան հետ ու Մահաիի միացած: Յաղթած և յաղթուած էր Սլաթին փաշա, բայց Մահաիութեան յառաջխաղացութեան բերմամբ՝ ամէն հաղորդակցութիւն ընդհատուած ըլլալով խորթումի հետ՝ դժուարութիւնները դժբաղդաբար հետզհետէ կը բազմապատկուէին: Զօրապետները, զօրքերը, որոնք հայրենասիրութեան ոգով և կամ պարտքի գիտակցութեամբ չէր անշուշտ որ կուուելու գնացած էին՝ սկսած էին տրտնջալ պաշարի ամենափոքր պակասէն, ինչ որ արտասովոր բան մը չէ պատերազմի դաշտին վրայ: Մատիպոսի լաւ դասեր տուած էր Սլաթին փաշա, ինչպէս իրենք ալ գիտէին, բայց այն ատելութիւնը, որ բոյն դրած էր իրենց սրտին մէջ՝ կոյր յոռեաններ զարձուած էր զիրենք, ու իր տարած յաղթութիւններէն աւելի՝ համեմա-

տաբար կրած պարտութիւններն էին որ աչքի կը զարնէին անմիտ զօրականներուն քով, և այս կը վերագրուէր իր անհաւատի կրօնին: Խեղճ մարդ, ինչ ընել այդ ապերախտ հողին վրայ, օտար երկիրքի մը տակ ու ինք հոն՝ միակ եւրոպացին, սուրբ պարտականութեան զոհուելու թերեւ միակ արամադիբը, տխմար ու նախապաշարեալ զօրականներու մէջ, որոնց քով իր քրիստոնեայ անունը արատ մը կը նկատուէր և պատճառը իրենց պարտութեանց...: Մինչդեռ թշնամին՝ անդին խալթումի վրայ յարձակելու կը պատրաստուի, մինչ արին կը հոսի չորս կողմ ու իրենք՝ չորս կողմէն պաշարուած՝ փոխան ինքնապաշտպանութեան միջոցներուն վրայ մտածելու և այսու գէթ յոյս մը ներշնչելու տագնապայոյզ մայրաքաղաքին, ահա զօրականի մը անունը աղարտոյ զօրքեր, անդին իրենց ցնորքներով կը զբաղին, մինչ վաանգը վայրկեանէ վայրկեան կը սպառնայ իրենց...: Վա՛յ այն երկրին որ այս րիտի զօրքեր արտապրած է ու հայրենիքի պատիւը փրկելու յոյսով զրկած է զիրենք կուուոյ դաշար. անկարելի է որ այդ խեղճ հայրենիքը մեծապէս չ'սուտէ այսպիսի սի՛ւրբոր, ստահակ և թուլամարթ արարածներէ: Խեղճ Սլաթին փաշան կը զգար այս ամենը, իր կեանքէն աւելի կը խորհէր իր պարտքի գործադրութեանը ու պատուոյն այն երկրին որուն՝ թէպէտ օտար՝ հաւասարմութիւն ուխտած էր: Չէր կարող այլևս ազգու հրամաններ տալ, ամենասպարզ խառութիւն մ'անդամ՝ շատ աղիտաբեր կրնար ըլլալ իրեն, ու կը մտածէր թէ ինչ ընէր: Իր լուսագոյն զօրականներն ու խորհրդականները կորանցուցած էր պատերազմի մէջ, դառնապէս կ'ողբար անոնց կորուստը, և ա՛լ աղօտ աչօք միայն կը գիտէր հորիզոնը՝ մռայլ, ամպամած: Բանակին մէջ իսկ շշուկը կը տարածուէր թէ՛ Արապի փաշա Եգիպտոսէն զուրս

վանած էր քաղքին տէրը, խախտել որ քեաֆիր քրիստոնեաներու բարեկամն էր կ'ըսէին թէ՛ Արապի փաշա ինքն էր այլևս քաղքին տէրը՝ մէկգի նեւած ըլլալով ամեն ոչ-եղիպտացիները, թուրքերը, չէրբէզները։ Կը տարածայնուէր նոյնպէս թէ՛ ինք (Սլաթին) պաշտօնանկ եղած էր կառավարութենէն, թէպէտ ճամբաները փակուած ըլլալով այդ հրամանը հասած չէր։ Անտարակոյս իրազեկ անհամներ հաւատ չէին ընծայեր այս քմածին առաջալիներուն, որոնք սակայն իր հրամաններու աղբեցութիւնը տկարացնելու ընտելին սնէին։ Արիութեան ոգին բոլորովին մարսած չէր դեռ իր մէջ։ Սլաթին փաշա կը լսէր այս ամենը ու չ'լսած ձեանալ կ'ուզէր, յիշեց արաբական առակը (Իւրբէլը Կան պահ ուսալ կամէլ մաշի) շունը կը հաչէ՝ մինչ ուղտը ճամբան կը շարունակէ։

Ժամեր, վայրկեաններ կան սակայն, կեանքի շրջանին մէջ, դառն և անագորոյն, յորում հերոս մ'իսկ ակամայ վհատուածի կը մղուի։ Գիտէր որ անձնուրաց զօրականի մը ներքի չէր վհատումը, և ոչ ալ քրիստոնէավայել' այն զոր սոսիպուած էր ընել. բայց ինչ ընել երբ Սուտանի ամբողջ հարուակողմը պաշարման անել վիճակին մէջ էր, ու ալ տեղէ մը յոյս չէր սպասուեր։ Կղերական, խաչակիր մը չէր ինք, և թերևս մեղադրելի չէր որ մեծ զոհողութիւն մ'ըրած ըլլար, զէթ առ երես, իր նախապաշարեալ բանակի համարումը կըրկին վայելելու համար. ստով, ի պահանջել հարկին, մասամբ մը ինքնապաշտպանութիւնը ապահոված պիտի ըլլար՝ ապագային ալ ցոյց տալով իր երկրորդական հայրենիքին թէ՛ պատասխանատուութեան սիրոյն զոհած էր մինչ իսկ իր սրբանուէր համոզումը։ Վասակավայել, գատապարտեւի արարք մը եթէ կուզէր, բայց՝ իբր քաղաքագետ և պարտաճանաչ զօրական սքանչելի մարդ։ Ս. Օ.

### ԱԶԳՍԷԻՆ ՔՐՈՆԻԿ

Եղիպտոսի հայութեան պատուիրակը Տիար Մինաս Չլրազ գրիած է մեզ իր *Conférence arménienne à Amsterdam* գրքոյկը, 32 էջերէ բաղկացեալ, նիւթ ունենալով «Խաղաղութեան Համաժողովն ու Հայկական Չարքերը»։ Հանճարեղ գրագևն իր իսկատիպ տաղանդով ու երկիրացոյց պերճասութեամբ յաջողած է ցնցելու Հոլանտայի ընտրեալ բազմութիւն մը, որ խոսած էր այն սրահին մէջ, ուր ասենաբա՛ւեց Տիար Մ. Չլրազ, նախընթաց ամսոյ 7ին, հոլանաւորս թեմաքերեր մեծ անձնա սրութեանց որք եր' Տօքթ. Քուրէր, հակայեղափոխական երեսիոխան, Պ. Լիֆթինը, աշատական երեսիոխան և Տօքթ. Վլրմէօլէն, կաթոլիկ երեսիոխան։ Արեւոյլ գրքոյկն ինքնին հրաշալիք մ'է. ջրագետ և գգայուն ոգոյ մը շունչը կը յածի հոն. մէն մի տպին արիւնի ու մեխիբի հոտը կ'առնես, հոն կը տեսնես պատկերացած Հայաստան, թատր բարբարիկ ու խուճուճ հրոսակութեանց, արիւնի ու կրակի, սովի և բռնաբարութեան. վերջուսմը կ'ունենես ախորանցեալին ու վերսրճարձումը վարպետոյն ապագային, որուն վրայ մեծ է հաւատքը մեր աննկուն ու հայրենասիր պատուիրակին։ Գրքոյկին վրայ աղօտ գաղափար մը տալու համար մեր Պատ. ընթերցողներուն, կրնանք բռնել թէ՛ այդչափ հոծ ու հալիքճ սուղերու մէջ յաջողած է ցոլացընել հայուն նկարագիրը, մէջ բերելով իբրև նմոյշ արեւելեան բանաստեղծութեան Սայաթ Նօվայի մէկ Սփրիտը, Քամառ-Քաթիպայի. Աղասի Մօր Օրօրը և Պ. Դրբեանի Լճուլը. առաջինը սիրահարութեան, երկրորդը աշմաշունչ հայրենասիրութեան ու երրորդը մեղամաղձութեան օրինակներ։

Այս գրքոյկին վերջին էջը միայն թարգմանելով շատանանք։

«Ես եկայ խաղաղութեան Համաժողովին «ժամանակ, որովհետև պահանջատէր մը կը «սիրէ յանկարծ կոխել իր պարտատէրները «ինչոյքին մէջ։ Ես եկայ Համաժողովին ժամանակ, որովհետև Ռիւյ Պլաս մը պէտք է «երևի կերտուածի պահուն, բռնու համար. «Բարի՛ ախորեակ, Տեարք։ Դուն՝ Պաթում,

«Կարսն Արտահան խնցիր Թարքիայէն»,  
 «գուն՝ Պօսնկան ու Հերձեղովինը. գուն՝  
 «Կիւրոսն ու Երիզտոսը. գուն՝ Թունոլը.  
 «գուն՝ առնաւորը. գուն՝ երկաթաւորները և  
 «կը թողուք Հայաստանը ճաթիլը քսի մը  
 «պէս, զայն պաշտպանելու համար չորս դաշ-  
 «նազիր ստորագրելէ վերջ: Եւ ելայ խաղա-  
 «ղովթան Համաժողովն ժամանակ, որովհե-  
 «տեւ մեր մարդասպանները հոններէյ սցու-  
 «ցիչներ գրեալ են, ինչ որ կը հարազրէ Հա-  
 «յաստանը իր գաւազներէն մին հոն փոխթա-  
 «ցընելու, յիշեցնել աշխարհի թէ՛ Արարիոյ  
 «բողոք խունկերը չգիտի իրնային հականե-  
 «խել այս արեւնի հոտը: Ե՞թէ հարկ է խնայել  
 «Թարքիոն զի բազմաթիւները, նոյն  
 «նկատումը պէտք է ունենալ նաև Հայերուն  
 «համար: Հորանտա չ'ը կրնար բանալ իր  
 «գանները գահիճներուն պատուիրակին առջև  
 «և զանոնք փակել շոհներուն պատուիրակին  
 «առջև...»:

«Հայնտակա՛ն ժողովուրդ, գուն որ երեք  
 «պար առաջ, աշուտաբար հիւրընկալեցիր ի՛նչ  
 «նախնիքը, ինչ նման զոհեր մ'աշխմանի  
 «հաշտանքին, գուն որ միշտ ելար նուիրա-  
 «կան ապա հնը՝ գաղթականաց և պղնձի  
 «ասպարը տարազրեւոց. փոքրիկ արի՛ ժողո-  
 «ւուրդ, որ յանախ գողացուցիր հզօր ժողո-  
 «ւուրդներ, քե՛նէ այսօր մէկ շնորհ պիտի  
 «խնդրեմ. չունիմ պէտք ոսկիիդ և ոչ արձնիդ.  
 «պահէ՛ զանոնք երջանիւթեանդ ու մանաւանդ  
 «քու ապահովւնեան համար, քանի որ խա-  
 «ղաղութեան Համաժողովը չ'պիտի յանդի-  
 «գինաթափ ընելու բիրտ այժը: Քե՛նէ բոլոր  
 «խնդրածս՝ զոյգն համակրանք մ'է պէս ի խա-  
 «չեցեալ Հայաստանը, վասնզի հանրային  
 «կարծիքին բարոյական ոյ՛ր որ թեղադրած է  
 «կառավարութիւնները խաղաղութեան Հա-  
 «մաժողով մը գումարելու, պիտի մ'է նաև  
 «զանոնք կանուխ կամ ուշ լռեցնելու իրնց  
 «փոխադարձ նախանձները և ձեռք առնելու  
 «Այրարտայ ժողովուրդին դատը:

«Ե՛. գու, Թագուհի՛դ Ստորին-Նահանգաց  
 «և Կայսրուհի՛դ Նէկրլնտական Հնգիաց, որ  
 «իբր գահայք ունիս աճեող ժողովուրդի մը  
 «օտրար, իբր վերարկու՛ վեհափառութիւնը և  
 «իբր թագ՝ բրիտանական գլխութիւնը: Հո-  
 «ւանտական դաշնակութեան ու ամբոթութեան  
 «վսե՛մ մարեացում, և ակնախտիդ արշալո՛յս»

«Արեւմտացի և Արեւելի ժողովուրդներուն  
 «համար, քե՛նէ ալ շնորհ մը պիտի խնդրեմ,  
 «ստորերուէ առջև ծնրապիբ: Յանուն մեր  
 «300,000 նահատակաց մայրերուն, կի-  
 «ւերուն, բոյրերուն ու աղջիկներուն կը  
 «պաշտպանեմ քեզ ի ծուր, մի՛ թող տար մեր  
 «գահիճներու ներկայացուցիչներուն՝ իրենց  
 «ըր՞նէնը պայքնելու քու ձեռքակ հրեշտա-  
 «կայն ձեռքերու...»:

Այս պէս կը վերջանայ բա՛նայաւթիւնը,  
 ունկնդիրները կը ծափահարեն ուժգին, ամեն-  
 քը ոտքի կ'եցնեն և ը բարեկն մեծանուն ա-  
 տենարանը:

— Ստացանք Կիւրոսի Կրթարան—Որբա-  
 նոցին 1898—99 տարուան միամսայ Տեղե-  
 կագիրը, որուն պարունակութենէն կ'երևի թէ՛  
 այս տարուան մէջ զգալի յառաջիմաստիւն  
 մը անհնունած է նիւթագիւ և բարոյագիւ:  
 Յաջողութիւն և բարասեռութիւն կ'ելիկիոյ դրա-  
 ցի այդ կը ի՛նչ սոյ՛ հանրօգուտ հաստատու-  
 թեան:

— Գահիրէի հայ ժողովուրդը այս օրերս  
 զբոսում Օրմանկան Պատրիարքի ազգագա-  
 ընթացքին վեմ, պարտաւորեցաւ 40 ի մօտ  
 ստորագրութեամբ հանրագրութիւն մը ներ-  
 կայել անդոյս Քաղ. Ժողովին, միանգամ  
 ընդ միշտ գաղբեցնել տալու համար անոր  
 անուան յիշատակութիւնը Ս. Եկեղեցւոյ մէջ:  
 Փափաքելի է թէ՛ Ազգ. վարչութիւնը առանց  
 յամտութեան գոնէ այս անգամ յարգէ ժո-  
 ղովրդի կամքը, որ դերագոյն է մանաւանդ  
 ազգային կենտական ինչիքներու մէջ, նկա-  
 տելով որ կատարուած իրողութեան մը հան-  
 պէպ կը գտնուի ինք և թէ՛ այդ հանրագրու-  
 թիւնը կը բա՛է գինք գերձ պահելու պատաս-  
 խանատուութենէ, եթէ ունենայ երբէք:

— Որտիութեամբ կ'իմանանք թէ՛ մեր  
 Գահիրէականի ժողովուրդը՝ հի նեկու ձեռնար-  
 կած է Ընթերցաստուն—Լսարան մը որուն յա-  
 բատե պահպանութեան սլոյմաններն ապա-  
 հովելու հարկաւոր միջոցներու մասին ս'լսած  
 է արդէն խորհրդակցութեան:

Մեր սրտագին ջերմ շնորհակալութիւն-  
 ները սոյն նոր ու ազգօգուտ ձեռնարկին յա-  
 ջողութեան համար:

# ԼՐԱՒԱՂ

Վիլնոյէն DAILY TELEGRAPH-ի կ'ըմացունեն թէ, Քիւրտերը հիմա հայ գիւղերը աւարի տուեր ու աւերեր են: 150 մարդ ջարդուած եւ 20 կիւն առեւանգուած. իսկ կոտորածէն փախողները կը մնան այսօր անպատրաստ եւ անօթի:

—STANDARD-ի Կ. Պոլսոյ թղթակիցը կ'ըմացունէ թէ՝ մ'ըստ խաղաղութեան համաժողովի ըրած դիմումներէն ջարդ այնքան զգածուած է որ Ռուսիոյ ղեկավարն յանձնարարած է Մուլթանիմ բողոքելու հայկական նահանգներուն մէջ գործուած գազանութեանց դէմ:

## ՂԱՐՄԷՆԻ

—Կիւրտսի լեռնակիւններն լաւ չեն գնահատեր այն երջանկութիւնը զոր կը վայելեն թրիտանական հովանաւորութեան տակ: Բայց Անգլիան միշտ պատրաստ է գոհացում տալու իր ժողովրդի փափագներուն: Լոնտոնի քաղաքական շրջանակներուն մէջ մտը զազափար ՚ը կը ծնի, այն է միացնել Կիւրտսի Կրէսէի, և այսպէս կազմել հիւլեն սկան իշխանութիւն մը իշխան Գէորգի կառավարութեան տակ:

## A. SAISSY

—Եւրոպական թերթեր հրատարակեցին թէ Ռուսիացի չայերի խումբ մը Վան մտեր է շարժում յառաջ բերելու համար, բայց չէ յաջողեր: Վանի չայեր չէին ուզած աչակցիլ ասոնց այլ արշաւանքի: Թիւրք զօրքերը յետ մղեր են արշաւախումբը, 10ի չափ մարդ անոնցմէ սպաննելով և նոյնչափ մ'ալ գերի բռննելով: Թիւրք զօրքերէն ալ մի քանիներ ոպանուեր են:

—Թիւրք ոստիկաններ համիտլիյէ Քիւրտերի հետ մէկտեղ կ'երթան Սերոք անուն հայ յեղափոխական մը փնտռելու պատրուակով կը կողոպտեն Բաղէշի Սերոքը զիւղը՝ և սպաննութիւններ կ'ընեն: Անկէ ալ կ'երթան ուրիշ 5 գիւղ կը կողոպտեն ու կրակի կուտան: Մուշի և Մասուլի մէջտեղ գտնուող Ս. Աղբրիկ վանքը կը կողոպտեն, վանահայրն ու հոն գտնուող երկու եկեղեցականները կը սպաննեն:

Վանի անգլիական և ռուսական հիւպատոսները որոնց իրաւասութեան շրջանակին մէջ կը գտնուին նաև Բաղէշ և Մուշ, հոն գնացեր են բնութիւն կատարելու և իրենց ղեկավարներին տեղեկագրելու համար:

Գուլգաբուի Գատրիարփարանը Բ. Դրամ հաղորդելով այս եղելութիւնները բողոքեր է:

Մուշի կառավարիչ Բէֆիգ պէյ սոյն

խոտվութիւնների համար իբրև պատասխանատու Կ. Պոլիս կանչուեր է:

## ԱՐՄԷՆԻԱ

—Գերմանական թերթերը վերջերս շատ կը խօսին Պ. Ջէնվիլիէի և Բ. Դրամ բանակցութեանց վրայ 40 հազար հայ գաղթականաց վերադարձի խնդրոյն առթիւ:

—Մակեդոնական Բարձրագոյն Կոմիտէն և հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը որոշած են միասին մաքառելու թուրք Բռնապետութեան դէմ:

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԻՍԱՄՍԵԱԿ

Մանրակշիռ Հանգամանքներ կը հրատարակուին միւր ամենաւարջ ուշադրութիւն պարճնելու Եւրոպայի արդի կայութեան վրայ, այն պահուն երբ շատ հեռի չենք կենտական Կարեւորութիւն ունեցող վեպքերէ. վեպքեր որոնք աւագ պարտաւորութիւն կը գնեն մեր վրայ, մօտէն հոկելու ամեն բանի որ կրնայ վերջապէս իրականացնել մեր բաղձալի յոյսերը:

Այս անգամ կառավարութիւնները չեն որ պիտի վարեն վեպքերը. ընդհանրապէս, այս վերջինք պիտի բռն տանին զանոնք վեպ ի այնպիսի խառնակութիւններ զորս կարելի է այժմէն նախատեսել: Եւ նայն իսկ ժողովուրդներն են որ պաշտօնական անիրաւութիւններէ պարտուած և իրենց պետական մարդերու տափակութենէն, ապիկարութենէն ու ոճիրներէն ճարահատ իրենց ձեռքով պիտի անօրինեն իրենց սեփական ճակատագիրը:

Ամեն կողմ կը լսուին ճարճատիւններ քաղաքականութեան փոսած թատերաբեմերուն վրայ. ընդհանուր ձանձրոյթ մը կը տիրէ ամալ խոստումներու, քինախնդիր հալածանքներու, լաւ կամ յոռի կամայականութեանց դէմ: Ֆրանսայի մէջ կը տեսնուին պայքարներ՝ որոնք միտքերը կ'անջատեն՝ երկուսն բարեկամները իրարու դէմ զինելով: Միակատական կուսակցութիւնները վիրաւի կ'արթնան և բացէ ի բաց կը պարզեն իրենց յեղափոխական զրօշները: Ամեն աչք յոռած է այս մեծ ազդին վրայ, և այն օրը երբ քա-

զարային պատերազմը անշարժութեան մատ-  
նէ անոր ուժերը, իր զրացիք պատեհ առիթ  
պիտի գտնեն կարգապահու իրենց գործերը  
և ընդարձակելու իրենց կալուածները: Ե-  
տօնիկա նշան մը պիտի ըլլայ ընդհանուր յե-  
զաշըջութեան մը՝ որմէ պարտին օգտուել  
գիտնալ ճնշեալ ժողովուրդները:

Անպիտա տապալի մէջ է, Հնդկաստանէն  
կը հասնին լուրեր ապստամբական շարժում-  
ներու՝ որոնք կրնան ահաբեկի անդրապարձում  
մ'ունենալ նոյն խ' Մայր-Եր' ըին մէջ: իր  
բնական թշնամիները՝ Գերմանիա, Ռուսիա  
և նոյն խ' Ֆրանսա, կը համաձայնին կեն-  
դանութիւն տալու Նարոշնոի ցամաքային  
պաշարման: Այլ ևս ո'չ ոք կը վստահի իր  
խօսքերուն՝ որոնք մէկէ աւելի անգոյններ  
գրեւորեցան և փոքր ազգերը՝ որ մեծ յոյսեր  
զրած էին անոր աջակցութեան վրայ, հիմա  
կ'ազնն իրենց ձեռքով կարգապահ իրենց գոր-  
ծը: Ազդու սերը շուկիներ կը բարձրանան  
Պալեստիններն և գլխաւորապէս Գանուբի և  
զերքներն: Համադրմանութիւնը, համա-  
պալութիւնը, համ.էզլնութիւնը կը կեդ-  
րոնանան, կ'ամբիօփումն, իրարու վրայ կը  
հակին: Ազդութիւնները կը խլրտին՝ վտնելու  
եւամուտ տարրերը և կազմելու համացեղ  
ամբողջութիւն մը: Իւրաքանչիւրը կը փափա-  
գի ապրել իր յատուկ ազգային կեանքով,  
հետեւելով իր ցեղային կազակցութեանց:

Ասորո-Հունգարիոյ մէջ բայ-բաժին կ'ըլ-  
լան արդէն այս պիտի և խարնչած միապե-  
տութեան բե՛րները: Ան այնք կ'որոշուի  
յարգել ծերունաշարք վեհազետին վերջին  
օրերը, բայց իր մահէն յետոյ ամեն կողմէն  
պիտի յարձակին սրտին վրայ:

Աստորիոյ գին սրական շրջանակներուն  
մէջ սկսած է մեծ անհանգստութիւն տիրել՝  
սպառա ինտութեանց ու մանուսնոց սո-  
տական բանակներու յաւելման պատճառաւ:

Յորչափ Ռուսիոյ ծովային գործունէու-  
թիւնը կ'որոշուի գեւ ի Մայրագոյն-Արևելք,  
ցորչափ Չարէ կառավարութիւնը՝ Ռուսիոյ

ծովային ուժը միայն զօրացնելու կը զբաղը,  
Աստորիա որիւ մասնազուրթիւն չ'ունեցաւ իր  
զրացի եր' ըին մէջ անցած գործածին մատին:  
Բայց նոյնը չէ այժօր՝ երբ Ռուսիան կը վերա-  
կալմէ Ֆինլանտիան, կ'աւելցունէ կովկասիոյ  
գինուորական ուժերը և կ'որոշէ ի մօտոյ կա-  
տարել զօրաց ահա շարժումներ՝ որոնց պիտի  
մասնակցի գինուորական այնպիսի ուժ մը որ  
Աստոր-Հունգարական ահա շարժ խաղաղու-  
թեան բանակը կը գերազանցէ:

Կը կարծուի թէ բոլոր այս պատրաստու-  
թիւնները էւտ նպատակի ո'նին Աստոր-  
Հունգարիան: Գեւրքերը՝ որ կրնան սեղի  
ունենալ Ֆրանսուա ժողէֆ կայսեր մահա-  
ամբ, արդարև ևս քան զևս մասնազուրթիւն կը  
սպաճառեն խորհող անձներու և ո'չ որ կ'ան-  
գիտանայ թէ Ռուսիա երբեք չպիտի ներէ  
գերմանական տարրին մշակամտութիւնը Աս-  
տորիոյ գործոց, միշտ մտու յիշն որու կը ձրգ-  
աին երկար ժամանակ ի վր համագերմա-  
նականք:

Իտալիա ևս ճգրաժամի մէջ է: Ռիճիօթի  
կարիպալտի զօրավարը, որ այս միշտին  
Մօնթիլիաէօ կը գտնուի, յայտարարած է  
թէ հանրապետականները կը դաշնակցին  
Վատիկանի հետ ընդլմ միապետութեան:  
Կը հաստատէ թէ ի մտոյ ծանրակշիռ զեպ-  
քեր սեղի պիտի ունենան: Ֆինլանտացիք  
գեղոհ են և կ'ընդլմանան Ռուս ինքնակա-  
լութեան: Մակեդոնացիք կարգախօսի մը կը  
սպասեն ապստամբելու համար թուրքիոյ  
զեմ՝ Պոլկարիա կառարեալ տարսափի մէջ է:  
Ճողովուրդները կ'ազնն. վերստանալ իրենց  
ազատութիւնը, և ոչինչ պիտի կրնայ կասե-  
ցընել արդարութեան և անկախութեան մեծ  
ու անպիմազրելի շունչը՝ որ փոթորի մը պէս  
կ'որոտայ այսօր բովանդակ Եւրոպայի վրայ:

Կեզր. Կը թարանիս վերամուտը կը սկսի  
յառաջիկայ Ապրիլին, ուստի կը հրաւիր-  
ուին փափագող ծնողներն՝ այժմէն արձանա-  
գրել տալու իրենց զաւակները աշակերտու-  
թեան: Վարկարարը կը գտնուի նախկին շէն-  
քին կից, Մուհամմա Ալիի պողոտան, Փիլի-  
նի/ի/ի խմբագրատունը, որ բաց է ամեն օր  
ստաւօտեան ժամը 10-12: